


ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ



2011թ. լրացավ Անիի՝ հայ Բագրատունիների մայրաքաղաք հռչակման 1050-ամյակը: Այս նվիրական տարելիցը յուրովի նշեցին ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի աշխատակիցները: Նրանք սեպտեմբերի 10-12-ին սրբազան ուխտագնացություն կատարեցին դեպի Հայաստան՝ հայոց տիեզերական մայրաքաղաք Անիում նշելու բաղձալի հորելյանը: Մա բացառիկ ու աննախադեպ երևույթ էր ինչպես կենտրոնի գիտական կյանքում, այնպես էլ Անիի Մայր տաճարում կատարված հիշատակի խնկարկումներում:

Անիի Ս.Աստվածածին կաթողիկե եկեղեցու խոնարհագմբեթ կամարների ներքո, Տերունական աղոթքի օրհնարուխ հնչյունների մուտքով սկսվեցին գիտական ընթերցումները՝ նվիրված միջնադարյան Անիի պատմության, մշակութային կյանքին: Քաղաքի արհեստների, ճարտարապետության, հնագիտության, կերպարվեստի, երա-

ժշտության և այլ ոլորտներին նվիրված ելույթներով հանդես եկան կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Հայրապետյանը, գիտաշխատողներ Կարինե Մահակյանը («Անին շեն, աշխարհն ավեր, աշխարհը շեն, Անին ավեր»), Կարինե Բազեյանը («Անիի ասեղնագործության և դրա ժառանգորդման շուրջ»), Համիկ Հարությունյանը («Անիի նշանավոր երաժիշտները»), Լատրա Աթանեսյանը («Անիի մանրանկարչությունը»), մանկավարժ Սուսաննա Կոչոյանը («Անին պատմական խաչողիներում») և այլք: Գիտական ընթերցումներին ներկա էին մեծ թվով ուխտագնացներ ու զբոսաշրջիկներ աշխարհի տարբեր անկյուններից, և նրանց մեջ մեծ թիվ էին կազմում Արևմտյան Հայաստանում ապրող մեր հայրենակիցները:

Անին՝ որպես հայ միջնադարյան մշակույթի օրրան, եղել և մնում է հայ

ՄՐԱԳԻՐ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ

- Նովեմբերի 10-12-ին կենտրոնում Անիի Մայր տաճարում:
- Բազմուխ խոսք՝ Բ. Գ. Գ., պրոֆեսոր Ս. Հայրապետյան

1. «Անին շեն, աշխարհն ավեր, աշխարհը շեն, Անին ավեր»:	հ. Գ. Բ., Կ. Մահակյան
2. Անիի ասեղնագործության և դրա ժառանգորդման շուրջ:	Պ. Գ. Բ., Կ. Բազեյան
3. Անիի բաղձալի խոնարհագմբեթի արվարձանի պեղումները:	Հ. Խաչատրյան
4. Անին և երվանդունիները:	Ա. Գ. Գ., Ս. Գևորգյան
5. Անիի նշանավոր երաժիշտները:	Արվ. Բ., Հ. Հարությունյան
6. Անիի մանրանկարչությունը:	Մ. Գ. Բ., Լ. Աթանեսյան

PROGRAM OF SCIENTIFIC READINGS

- Commemorating the ancestors in Ani Cathedral
- Opening speech: Prof. S. Hayrapetyan, PhD

1. K. Sahakyan, CPS: "Ani in its prime and the world in mine; The world in its prime and Ani in mine"	
2. K. Bazeyan, PHD: About Ani embroidery and its inheritance	
3. H. Khachatryan: The Excavations in Ani Cave Suburbs	
4. S. Petrosyan, PHD: Ani and the Yervandites	
5. H. Harutyunyan, CA: Ani's Famous Musicians	
6. L. Atanesyan: Ani miniatures	

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի Տնօրեն: Centre of Armenian Studies, IAS RA

ազգային հանճարի անբացատրելի աշխարհատեսության գեղագիտական


ընկալումների անսպառ գանձարան: Անհագիտության յուրաքանչյուր համաժողով մի նոր էջ ու հայտնություն է բերում ունկնդրին անկախ նրա մասնագիտական հետաքրքրություններից:

Այդ պատճառով շիրակյան կենտրոնի հաղորդումները լավեցին մեծագույն հետաքրքրությամբ ու ավարտվեցին բազում հարցերով՝ դուրս գալով գիտական նեղ շրջանակներից: Հեռավոր կարտակեզ հայրենակիցների անհարուխ հանդիպումը խնկարկվեց Մայր տաճարում մի անբացատրելի միակամությամբ. երբևէ ազգովին այս-



տեղ պատարագելու և տիրոջ իրավունքով ժառանգելու այս տիեզերական քաղաքամայրը վերականգնելու սուրբ պարտքը:

Այս ուխտագնացությունը նշանակալի էր նաև նրանով, որ համընկնում էր Հայ Առաքելական եկեղեցու տերունական տոներից մեկին՝ Սուրբ Խաչին: Ուխտավորները բաց չթողեցին երջանիկ հնարավորությունը ներկա գտնվելու Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու խաչի տեղադրումից հետո կատարվող անդրանիկ Սուրբ պատարագին: Վանա լճում՝ «ինչպես բիրը աչքի մեջ» վեր հառնած այս հեքիաթային տաճարում, ազգովին աղոթք բարձրացվեց առ



Աստված մեր գերեվարված հայրենիքի սուրբ մասունքների փրկության, մեր փոքրիկ մայր հողի բարգավաճման և ուժեղացման համար:

Սուրբ Խաչի տոնակատարությունը շիրակցի ուխտավորները շարունակեցին և սրբազան զգացողությունների գազաթնակետին հասան դեռևս հրաշքով կանգուն Վարազա Սուրբ Նշան եկեղեցում: Այնպիսի զգացողություն էր տիրում, կարծես խաչանախշ հինավուրց պատերից ներս հնչում էին Սկրտիչ Խրիմյանի ու նրա շուրջը համախմբված ճեմարանականների աղոթքների արձագանքները: Բոլորին համա-




կել էր օրհնության ու խնկարույր աղոթքների անբացատրելի հուզախտովքը:

Վերադառնալով Շիրակ աշխարհ՝ ԸՀՀ կենտրոնի բոլոր աշխատակիցները մի անբացատրելի ուժ ու ավյունով պատրաստվում են նորանոր ուխտագնացությունների ու ակնկալում հայագիտական բացահայտումներ իրագործել պատմական հրաշափառ հայրենիքում:



«Գիտական աշխատություններ»/ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն: խմբ. Ս. Հայրապետյան.-Եր.: Գիտություն, 2011, Հատոր 13. - 194 էջ:



Լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի XIII հատորը՝ 12 հրատ. մամուլ ծավալով, պրոֆեսոր Ս.Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ:

Հատորում ընդգրկված են 25 հոդվածներ, հրապարակումներ և հաղորդումներ հայագիտության և հումանիտար գիտությունների այլ ոլորտներից:

Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, որն առանձնահատուկ տեղ է գրավում ժողովածուի հա-

տորներում, այս անգամ ներկայացվել է Մեծ Մեպասարի վրա սրբարանի կառուցման դիցաբանական հենքի (Լ.Եզանյան), այստեղ գայլերի զոհաբերության վաղբրոնզիդարյան ծեսում յոթ թվի խորհրդանշական դերի (Լ.Եզանյան), Հայկաձորի բնակավայրի 2010թ. պեղումների նախնական արդյունքների (Հ.Խաչատրյան), Արագածի Սբ Երրորդություն եկեղեցու ճարտարապետության ծագումնաբանության՝ գմբեթի կառուցվածքի հիման վրա (Շ.Սասանո) կատարված հետազոտություններով: Շիրակի պատմամշակութային նոր շրջանին են նվիրվել Ա.Հայրապետյանի «Արևմտահայության տեղաբաշխումը և ժողովրդագրական պատկերը Փամբակում XIXդ. 30-40-ական թվականներին» հոդվածը և 1921թ. ապրիլ-դեկտեմբերին՝ Ալեքսանդրապոլի գավառում խորհրդային իշխանության հաստատման շրջանում, արևմտահայ գաղթականության վիճակը լուսաբանող Կ.Ալեքսանյանի հաղորդումը:

Ալեքսանդրապոլի հասարակական-քաղաքական կյանքը յուրօրինակ փաստերով է լուսաբանված Գ.Այվազյանի ««Մեղու Հայաստանի»-ն 1860-1880-ական թթ. Ալեքսանդրապոլի մասին» հոդվածում: Ժողովածուի քեմատիկ բովանդակություն են ներառված նաև Լենինական-Գյումրու տնտեսական-մշակութային կյանքին և ազգագրությանն առնչվող հրապարակումներ: Ա.Բոյաջյանն անդրադարձել է Լենինականի տեղական արդյունաբերության և արտելների գործունեությանը, իսկ Ա.Սահակյանը՝ Շիրակի մարզի առևտրական կազմակերպություններում կառավարման հոգեբանական հիմնախնդիրներին:

Լ.Աթանեսյանի հաղորդումը նվիրված է գյումրեցի քանդակագործ Արտուշ Պապոյանի ստեղծագործություններին, որոնք տեղ են գտել ժամանակակից քաղաքի տարբեր անկյուննե-

րում՝ դառնալով քաղաքային մշակույթի կարևոր բաղադրիչ: Օ.Հարոյանի «Սուրբ Խաչի տոնական ուտեստը Գյումրիում (XXդ. երկրորդ կես)» հաղորդումը բացահայտում է քաղաքային ծիսական ուտեստների ժամանակային փոխակերպումներն ու տարածամասկյա համեմատությունները:

Հայոց պատմության հնագույն և միջնադարյան շրջաններին են առնչվում Ս.Պետրոսյանի «Արամանյակի որդիները և նրանց տիրույթները եռադասության տեսանկյունից», Լ.Պետրոսյանի «Քարթլիս Ցխովրեբա»-ն Հայոց Արշակ թագավորի մասին» և Ա.Ակոպովի «Ժողովրդագրական գործընթացները Տայքում XIXդ. առաջին երեսնամյակին» հոդվածները:

Հատորում ծավալուն տեղ են գրավել գրականագիտական և լեզվաբանական տարբեր թեմաներ արծարծող հրապարակումները: Ա.Հակոբյանն անդրադարձել է Գ.Գուարչի «Հայկական տոհմաձագ» վեպին, որը յուրահատուկ պատգամ է՝ երբեք չմոռանալ Հայոց Մեծ եղեռնի զոհերին: Ն.Ավետիսյանի հոդվածում խոսվում է Հովի. Շիրազի երկերում դերբայ լրացումով գոյականական բառակապակցությունների և դրանց ոճական արժեքի մասին:

Մ.Խաչատրյանն անդրադարձել է հայրեններում և կաֆաներում արաբական փոխառություններով կազմված բայերի քերականական կարգերի արտահայտությանը, Լ.Խաչատրյանը՝ ժամանակակից հայերենում անկատար դերբայական հիմքով վերլուծական բայաձևերի կադասարներին: Հ.Չաքյանի հոդվածում դիտարկված են արդի հայերենում խոսքիմասային տարարժեքություն ունեցող բառերը, իսկ Ս.Ավետիսյանը վերլուծել է բուսանուն պարունակող եռալեզու դարձվածաբանական միավորների իմաստային կադասարները: Հ.Մատիկյանի դիտարկումները անգլիական և հայկա-

կան օրորոցային երգերում «երեխա» հասկացության դրսևորման մասին են:

Էթնոհոգեբանության արդի խնդիրների քննությանն է առնչվում Կ.Սահակյանի «Կարծրատիպերը էթնո-ես-ի և էթնո-մենթ-ի համատեքստում» հաղորդումը:

Բուհական գիտամեթոդական խնդիրներ են արծարծված Ս.Հայրապետյանի «Գրաբարի նախադասության հնչերանգային տիպերի ուսուցումը» և Հ.Հարությունյանի «Ութձայն համակարգը հայ միջնադարյան երաժշտության բուհական դասընթացում» հոդվածներում:

«Գիտական աշխատություններ»-ի 13-րդ հատորում տպագրված նյութերն ընդգրկում են համառոտ ռուսերեն և անգլերեն ամփոփումներ: Վերջում գետեղված է «Գիտական լրատու» բաժինը՝ ուշագրավ նյութերով:



«ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ. Ժողովրդական, կրոնածիսական, պատմական և ազգաբանական պատկերացումներ», Կ. Սահակյան.- Եր.: Գիտություն, 2011-44էջ:




ՀՀ ԳԱԱ Օիրակի հայագիտական հետազոտությունների գիտաշխատող, հոգեբանական գիտությունների թեկնածու Կարինե Սահակյանի «Մուրք Սարգիս» գրքույկը, որը հրատարակվել է կենտրոնի գիտխորհրդի որոշմամբ, ամփոփում է սրբի մասին ժողովրդական, կրոնածիսական, պատմական և ազգաբանական պատկերացումներ: Գրքույկում տեղ են գտել նաև Մուրք Սարգսի մասին ժողովրդական պատկերացումների ռուսերեն և անգլերեն թարգմանությունները:

Հեղինակի նպատակն է պարբերաբար ներկայացնել ժողորդական ծեսերն ու տոները Օիրակի մարզում՝ որպես համայնքի զարգացման գրավական:



«Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ. –XXդ. սկիզբ). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, աշխատախրոթյամբ՝ Ա.Ս.Հայրապետյանի».-Եր.:Գիտություն, 2011-271 էջ



ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել պատմական գիտությունների թեկնածու,

ԳԱԱ Օիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող Ա.Հայրապետյանի կազմած «Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ. – XXդ. սկիզբ)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն:

Ժողովածուն արխիվային վիճակագրական փաստաթղթերի հարուստ հավաքածու է՝ բաղկացած 325 աղյուսակներից, որոնք վերաբերում են քննության ենթակա ժամանակահատվածում Ալեքսանդրապոլի գավառի բնակչության էթնոկոնֆեսիոնալ իրավիճակի, բնակավայրերի տեղագրության, բնակչության տեղաշարժերի, նրա ազգային կազմի խնդիրներին, ինչպես նաև լույս են սփռում արևմտահայերի դեպի գավառ պարբերաբար կրկնվող գաղթերի, ըստ բնակչության նոր վայրերի նրանց տեղաբախշման և գավառի բնակչության էթնոկոնֆեսիոնալ պատկերում այդ գաղթերի թողած ազդեցության վրա: Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է հայ ազգաբնակչության լուրջ տեղաշարժերով և էթնոժողովրդագրական բուռն գործընթացներով աչքի ընկնող մի կարևորագույն պատմական ժամանակահատված՝ XIXդարի առաջին քառորդից մինչև 1917թ., գործընթացներ, որոնց հիմքում ընկած են տնտեսական և հատկապես քաղաքական մի շարք շարժառիթներ:

Ժողովածուն հասցեագրված է ժողովրդագրության հարցերով զբաղվող պատմաբաններին, բուհերի մասնագիտական բաժինների ուսանողներին և ընթերցող հանրությանը: Աշխատությունը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Օիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ: